ԱՏԱՄՆԵՐԻ ԾԿԹՈՒՄ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



WIGMORE

Ի՞ՆՉ ԳԻՏԵՆՔ ԱՏԱՄՆԵՐԻ ԾԿԹՄԱՆ ՄԱՍԻՆ

Երեխաների մեծ մասի առաջին ատամը ծկթում է 4-6 ամսականում, սակայն մինչև 18 ամսականը առաջին ատամի ծկթումը համարվում է նորմալ: 30 ամսականում երեխաներն ունենում են բոլոր 20 կաթնատամները:

Հազվադեպ, երեխան կարող է ծնվել ատամիկով կամ ատամը կարող է ծկթել մինչև երեք ամսականը: Այս ատամները նույնպես կազմում են ատամնաշարի մաս՝ առողջ կաթնատամներից են, եւ հեռացնել խորհուրդ չի տրվում, եթե չեն խանգարում կերակրելուն կամ շարժուն լինելու պատճառով չեն կարող պոկվել և հայտնվել շնչուղիներում:



Վերին ծնոտ	Ծկթում
Կենտրոնական կտրիչ	8-12 ամիս
Կողմնային կտրիչ	9-13 ամիս
Ժանիք	16-22 ամիս
Առաջին սեղանատամ	13-19 ամիս
Երկրորդ սեղանատամ	22-33 ամիս

Ստորին ծնոտ	
Երկրորդ սեղանատամ	23-31 ամիս
Առաջին սեղանատամ	14-18 ամիս
Ժանիք	17-23 ամիս
Կողմնային կտրիչ	10-16 ամիս
Կենտրոնական կտրիչ	6-10 ամիս

Ի՞ՆՉ ԱԽՏԱՆԻՇՆԵՐ ԵՆ ԴԻՏՎՈՒՄ ԱՏԱՄՆԵՐԻ ԾԿԹՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ատամների ծկթման ժամանակ կարող են դիտվել լնդերի քոր, այտուցվածություն և ցավոտություն: Երեխան կարող է անհանգիստ լինել, որոշ դեպքերում ջերմության թեթև բարձրացում է դիտվում:

Ծնողների, իսկ երբեմն նաև բժիշկների կողմից ատամների ծկթելուն վերագրվում են նաև այլ ախտանիշներ, որոնք ոչ թե ծկթելու, այլ հիվանդության նշան կարող են լինել:

Հազը, բարձր ջերմությունը, լուծը, փսխումները, հեղուկներից կամ սննդից հրաժարվելը ատամների ծկթումով պայմանավորված չեն և այդ նշանների առկայության դեպքում պետք է դիմել բժշկի՝ դրանց իրական պատճառը պարզելու և համապատասխան բուժում իրականացնելու համար:

ԻՆՉՊԵ՞Ս ՕԳՆԵԼ ՓՈՔՐԻԿԻՆ

Լնդերի ցավը մեղմելու համար կարելի է մեղմորեն մերսել նրա լնդերը. նախապես լվացեք Ձեր ձեռքերը և մատներով կամ փափուկ կտորի օգնությամբ զգուշորեն մերսեք երեխայի լնդերի այտուցված հատվածները:

Կարելի է օգտագործել նաև ծկթման համար նախատեսված հատուկ սառեցված օղակները, որոնք երեխան կծում է՝ մեղմելով լնդերի ցավը:

Շատ բարձր կամ ցածր ջերմաստիճանը կարող է վնասել օղակի պլաստմասսան և բերել հեղուկի արտահոսքի, ուստի այդ օղակները՝

- պետք է սառեցնել սառնարանում
- չի կարելի պահել սառցարանում
- չի կարելի վարակազերծել եռացող ջրում կամ սպասք լվանալու մեքենայում

Մանկաբույժի հետ խորհրդակցելով՝ ատամների ծկթումով պայմանավորված անհանգստությունը նվազեցնելու համար կարելի է պարացետամոլ (ացետամինոֆեն) և/կամ իբուպրոֆեն տալ:

Լնդերին քսվող տարբեր տեղային ցավազրկող դեղամիջոցներ խորհուրդ չի տրվում օգտագործել: Նախ, դրանք շատ արագ լվացվում են թքով և երկարատև ազդեցություն չեն կարող ապահովել, մյուս կողմից որոշ ցավազրկողներ կարող են թմրեցնել երեխայի բկանցքի լորձաթաղանթը, խանգարել երեխայի կլման ակտը և կյանքի համար վտանգավոր իրավիճակներ ստեղծել:

ՈՒԻԳՄՈՐ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ, ՈՐ ՍԻՐՏ ՈՒՆԻ...



WIGMORE